

ԱՆԳԼԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ԵՐԿՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ, ՌԻՍՈՒՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում բուհական պայմաններում օտար լեզուների ուսուցումը որպես երկրորդ մասնագիտություն ունի իր առանձնահատկությունները, որոնք բխում են ուսանողների երկլեզվության բնույթից, ինչպես նաև ձեռք բերված լեզվական փորձից: Ըստ Մ.Գ. Աստվածատրյանի, հայ սովորողներին յուրահատուկ է ենթակարգված երկլեզվություն, որը բնորոշվում է կարգավիճակների փոփոխությամբ. մի լեզուն, այսինքն՝ մայրենին, գերիշխող է մյուսի՝ ռուսերենի նկատմամբ: Սա երկլեզվության առավել տարածված տեսակն է: Երկլեզվության պայմաններում չորրորդ լեզուն դասավանդելիս նկատվում է տարբեր կողերի՝ մայրենի, երկրորդ (ռուսաց լեզվի), երրորդ՝ (գերմաներենի) և չորրորդ՝ (անգլերենի) ինչպես դրական, այնպես էլ բացասական փոխազդեցություն: Ի դեպ, պետք է նշել, որ ինչքան շատ լեզուների է տիրապետում սովորողը, այնքան հեշտ է նա սովորում ամեն մի նոր լեզու: Մասնագիտական բուհում որպես երկրորդ օտար լեզու սովորաբար դասավանդվում է այնպիսի լեզու, որը մոտ է առաջին օտար լեզվին և պատկանում է նույն լեզվախմբին: Սա բավականին հեշտացնում է երկրորդ օտար լեզվի յուրացումը, զգալիորեն բարձրացնելով ուսուցման արդյունավետությունը: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս դասավանդման փորձը, ի հայտ են գալիս բացասական ներթափանցման երևույթներ, որոնք առաջացնում են դժվարություններ երկրորդ օտար լեզվին տիրապետելու ընթացքում:

Բացասական ներթափանցման տակ հասկանում ենք լեզվական նորմերից կատարվող շեղումները [Մ.Յու. Ռոզենցվեյգ, Լ.Մ. Ուման]: Սրանք երևույթներ են, որոնք ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ որևէ անձ (կամ մարդկանց խումբ) կանոնավոր կերպով օգտվում է տարբեր լեզուներից:

Երկլեզու սովորողի խոսքային գործունեությանը վերաբերող հարցերը հետաքրքրում են և՛ հոգեբաններին, և՛ լեզվաբաններին և հոգելեզվաբանության բաղկացուցիչ մասն են կազմում:

Փոխներթափանցման ենթակա ոլորտներն են հնչյունական կողմը, բառապաշարը և քերականությունը, ինչպես նաև խոսքային գործունեության տեսակները: Փոխներթափանցման երևույթները մինչև այժմ ավելի շատ քննարկվել են հնչյունական մակարդակում: Ավելի քիչ են ուսումնասիրված քերականական փոխներթափանցման դեպքերը: Քերականական փոխներթա-

փանցումն առաջանում է հատկապես բանավոր հաղորդակցման ժամանակ: Թվում է, որ քերականական փոխներթափանցման դեպքերը պետք է բացառվեն ուսումնական գործընթացում, քանի որ սովորողը դասավանդողից ստանում է անհրաժեշտ տեղեկություններ այս կամ այն լեզվական միավորի ճիշտ կիրառման վերաբերյալ: Սակայն դա իրականում այդպես չէ, քանի որ սովորողը կատարում է բազմաթիվ քերականական սխալներ: Որոշ դժվարություններ են ներկայացնում բարդ քերականական երևույթները, որոնք շատ կարևոր են ասույթի ճիշտ ձևավորման և ընկալման համար: Այդ երևույթների յուրացման ընթացքում ուսանողները կատարում են տիպական սխալներ, որոնք մեծ մասամբ լեզուների բացասական ներթափանցման արդյունք են: Այդ սխալները վերացնելու համար դասավանդողն ինքը պետք է գիտակցի այն բոլոր օրինաչափությունները, որոնք հատուկ են ուսումնասիրված և ուսումնասիրվող լեզուներին:

Վ.Գ.Գակը նշում է, որ մայրենի կամ մի այլ լեզվի բացասական ազդեցությունը կարելի է վերացնել երկու ճանապարհով՝ կամ ձեռք բերած լեզվական փորձով, կամ էլ գիտակցելով այն տարբերությունները, որոնք գոյություն ունեն լեզուների միջև: Սովորողների լեզվական փորձի կիրառումը կապված է այն ընդհանուր հիմնահարցի հետ, թե ինչպես են հարաբերակցվում լեզուները անհատի գիտակցության մեջ: Կախված այս հարցի լուծումից, հնարավոր են երկրորդ օտար լեզվի ուսուցման երկու սկզբունքային մոտեցումներ՝

1. Երկրորդ օտար լեզու ուսուցանելիս հիմնվել դասավանդվող լեզվի նյութի վրա, այսինքն՝ անտեսել ուսանողների ձեռք բերված լեզվական փորձը:

2. Երկրորդ օտար լեզու ուսուցանելիս հաշվի առնել սովորողների նախկինում ձեռք բերած լեզվական փորձը [Բոգոռոդիցկայա Վ.Ն.]:

Երկրորդ մոտեցումը թույլ է տալիս դիտել երևույթները բազմակողմանիորեն [Վ. Ս. Ցետլին], հաշվի առնելով ոչ միայն մայրենի և առաջին օտար լեզուներում ձեռք բերած դրական փորձը, այլ նաև նախկինում յուրացված լեզուների բացասական ազդեցությունը: Առաջին մոտեցման տեսական նախադրյալն այն է, որ անհատի գիտակցության մեջ լեզուները գոյություն ունեն ավտոնոմ կերպով, այսինքն, չեն առնչվում այլ լեզուների հետ: Երկրորդ մոտեցման տեսական նախադրյալն այն է, որ անհատի գիտակցության մեջ լեզվական կոդերը փոխազդում են և միմյանց հետ սերտորեն կապված են: Այս սկզբունքը պահանջում է հաշվի առնել սովորողների լեզվական փորձը ուսումնական գործընթացում:

Նշված երկու մոտեցումներից կարելի է եզրակացնել հետևյալը.

ա. Յուրաքանչյուր նոր լեզու ուսուցանելիս, տվյալ դեպքում երկրորդ օտար լեզու (OL2), հիմնվել գլխավորապես սովորողների մայրենի լեզվից (UL) ձեռք բերած փորձի վրա՝ UL – OL2 [Գ.Վ.Կոլշանսկի, Ռ.Յ. Բարսուկ]:

բ. սովորողների՝ առաջին օտար լեզվում ձեռք բերված փորձի վրա՝ OL1 - OL2 [Բ. Ա. Լապիդուս, Ի.Ի. Կիտրոսկայա]:

գ. սովորողների՝ թե՛ մայրենի և թե՛ օտար լեզուներում ձեռք բերած լեզվական փորձի վրա՝ UL- OL1 - OL2 [Վ.Գ.Բոգոռոդիցկայա, 1974, Ս.Ֆ Շատիլով, Ն.Վ. Բագրամովա]:

Այժմ դիտարկենք նշված դրույթների դրական և բացասական կողմերը:

Ինչ վերաբերում է առաջին մոտեցմանը, ինչպես նշում է Գ.Վ.Կոլշանսկին, մայրենի լեզվի առաջնային կողը հիմք է դառնում հետագա երկրորդական կողերի առաջացման համար: Մայրենի լեզուն որպես հիմք է ծառայում ընդհանրապես օտար լեզուներ սովորելու համար (առաջին, երկրորդ, երրորդ և այլն):

Ըստ երկրորդ մոտեցման [Բ.Ա.Լապիդուս, Ի.Ի.Կիտրոսկայա] երկրորդ օտար լեզվի վրա մայրենի լեզվի հետ զուգահեռաբար փոխազդում է առաջին օտար լեզուն: Ըստ այս վարկածի, երկրորդ օտար լեզվի ուսուցման մեթոդիկայի կազմակերպումը պետք է ընթանա OL1—OL2 ուղիով:

Ըստ երրորդ մոտեցման, [Վ.Գ. Բոգոռոդիցկայա], յուրաքանչյուր նոր լեզու զարգացնում է սովորողի մտածողությունը, այն ավելի է հարստանում մայրենի և օտար լեզվում ձեռք բերած լեզվական փորձով:

Սա, մեր կարծիքով, հիմք է հանդիսանում այն վարկածի համար, որ առավել արդյունավետ է ուսուցանել երկրորդ օտար լեզուն (OL2) ելնելով սովորողների թե՛ մայրենի (UL), և թե՛ առաջին օտար լեզվի (OL1) փորձից: Առավել արդյունավետ է UL- -OL1- OL2 մոտեցումը, քանի որ այն հնարավորություն է տալիս երկրորդ օտար լեզու ուսուցանելիս (OL2) ընդգրկել բոլոր լեզուներում ձեռք բերած գիտելիքները, հմտությունները և կարողությունները: Այս, նաև մեր կողմից ընդունված, վարկածից հետևում է, որ երկրորդ օտար լեզվին տիրապետելիս սկզբնական փուլում ներքին կողից փոխադրման արդյունքում, երկրորդ օտար լեզուն կրում է ոչ միայն մայրենի, այլ նաև առաջին օտար լեզվի ազդեցությունը:

Ինչպես արդեն նշել ենք, ըստ Մ.Գ. Աստվածատրյանի, հայ սովորողներին հատուկ է ստորակարգված երկլեզվություն, որը բնորոշվում է կարգավիճակների անհավասարությամբ, այսինքն՝ մայրենի լեզուն գերիշխող է երկրորդ լեզվի՝ ռուսերենի, նկատմամբ:

Դասավանդման մեր բազմամյա փորձը և գիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ թեև չորրորդ լեզուն՝ տվյալ դեպքում անգլերենը, գտնվում է առաջին օտար լեզվի՝ գերմաներենի ազդեցության տակ, սովորողը այնուամենայնիվ, գտնվում է միաժամանակ թե՛ մայրենի, և թե՛ առաջին օտար լեզվի ազդեցության տակ: Այս առանձնահատկությունը պետք է հաշվի առնել անգլերենը որպես չորրորդ լեզու դասավանդելիս:

Մայրենի կամ նախկինում յուրացված այլ լեզվի բացասական ազդեցությունը վերացնելու նպատակով Վ. Գ. Գակը առաջարկում է ընկալել և գիտակ-

ցել այն տարբերությունները, որոնք գոյություն ունեն լեզուների միջև: Տարբերությունները բացահայտելու նպատակով անհրաժեշտ է անցկացնել տվյալ լեզվական երևույթների զուգադրական վերլուծություն: Ձուգադրական վերլուծության նպատակն է ի հայտ բերել ուսումնասիրվող լեզուներում որոշ քերականական երևույթների համընկնող, մասնակի համընկնող և չհամընկնող փաստերը: Այս ուղղվածության հետևանքով զուգադրական ուսումնասիրությունը սերտորեն կապված է լեզուների ուսուցման և ուսումնառության հետ: Այն ունի գործնական նշանակություն և նրա նպատակն է ուսումնասիրել օտար լեզուները մայրենի լեզվի և առաջին օտար լեզվի հիմքի վրա:

Ձուգադրական վերլուծության արդյունքները հնարավորություն կընձեռեն կանխագուշակել ուսումնասիրված լեզուների և նոր յուրացվող լեզվի դրական կամ բացասական փոխներգործման ուղրտները, ինչպես նաև տվյալ քերականական նյութի ուսուցման դժվարությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Аствацатрян М.Г., Обучение иностранному языку в условиях субординированного билингвизма (на примере немецкого языка в армянской школе). Автореферат на соискание ученой степени доктора пед. наук. М. 1988.
2. Баграмова Н.В., О требованиях к структуре и содержанию учебника по иностранному языку как второй специальности. Теория и методика преподавания иностранного языка в качестве второй специальности. Лен. 1980.
3. Барсук Р. Ю., Основы обучения иностранному языку в условиях двуязычия. М. 1970.
4. Богородицкая В.Н., Обучение второму иностранному языку в вузе. (на материале видовременных форм английского глагола). Автореферат на соискание ученой степени кпн. М. 1974.
5. Гак В. Г.-Межъязыковое сопоставление и преподавание иностранного языка. ИЯШ. М. 1979. N 3.
6. Китросская И.И., Некоторые вопросы переноса в связи с преподаванием второго иностранного языка в условиях языкового вуза. Ученые записки МППИИЯ им. М.Тореза. Т.53. М. 1970.
7. Колшанский Г.Ф. Теоретические проблемы билингвизма. Сб. Лингвистика и методика в высшей школе. М.1967. Выпуск 4.
8. Липидус Б.А., Обучение второму иностранному языку как специальности. М. 1980.
9. Розенцвейг М.Ю., А.М. Уман. К проблеме грамматической интерференции. "Проблемы структурной лингвистики". М. 1962г.
10. Цеглин В.С., Доступность и трудность в обучении. М., 1984.
11. Шатилов С.Ф., Путилина Г.Н., Некоторые вопросы обучения второму иностранному языку как специальности. Теория и методика преподавания иностранного языка в качестве второй специальности. Лен., 1980.